

ՉՕՐ. ԱՆԴՐԱՆԻԿ ԿԸ ԽՕՍԻ

(3)



Դ.

Ընդհանուր պատերազմին սկիզբը անցայ կովկաս և Մեացի ուսական բանակին կողքին մինչև 1917 ի յեղափոխութիւնը, որ ատեն Հայաստանի Ապահովութեան խորհուրդը թրքահայ զորախումբ մը կազմակերպեց: Այս առթիւ ամբողջ երեք ամիս ինձ դէմ լարուեցան դաւադրութիւններ, և եղան հալածանքներ: Եւրոպացի զորավար մը, զընդապետ մը, հիւսպատոս մը և ուրիշ պաշտօնեայ մը օր մը զիս կանչելով ըսին հետեւեալը.

— Անդրանիկ, շատ կը ցաւինք որ բու ստրիկ տակը կը փորեն և փուշեր կը թափեն, որպէսզի յաջողութիւն չունենաս:

Այս ըսելով տետրակ մը հանեցին իրենց՝ զրպանէն և կարդացին զիս հալածողներուն անունները:

Թէ՛ յիշեալ Եւրոպացի անձնաւորութիւններուն և թէ՛ տետրակի մէջ արձանագրուած հալածիչներու անունները կը հրապարակեմ, երբ որ լարմար ժամանակը գայ: (1)

Պատասխանելով հակառակորդներու այն խօսքին թէ չկրցայ կասեցնել թրքական արշաւանքը կարինի առջև, ըսեմ որ կարին մտնելէս մինչև ե՛նչիս տեւած է միայն վեց օր: Այս ճակատին առջև, վասպուրականէն մինչև Երզնկա և Բարեբրդ, կատարուած չարիքին պատճառները պէտք է փնտռել թրքիքի ազդեցական գիմնազիօնի մէջ կազմուած քօրբիւսի (զօրաբանակ) և Ազգային Խորհուրդի մօտ: Այս քօրբիւսին կազմութեան համար ծախսուեցաւ տասը միլիոն ռուպլի:

Արդեօք կրնա՞ն ըսել թէ Քէրէնըսկիի կառավարութեան վեցամսեայ շրջանին մէջ 500 հազար ձայններ կայացնող? զաշնակցական կուսակցութիւնը կրցա՞ւ զրկել 5 հազար կամ 5 հազար հոգի ղէսլի ճակատ:

Սարրգամը՝ համնելուս ճակատի ընդհ. հրամանատար վրացի զօր-
Օտիշիլիցէն ըսաւ ինձ. «Ես հագիւ
ազատեցայ այդ ճախճախուսներէն,
հիմա ալ դու ես որ պիտի իյնաս
միեւնոյն ցեխերուն մէջ»: Թարգ-
մանս էր բժիշկ Չավրիէֆ:

Թէ ինչպէս օգնած է ինձ դաշ-
նակցական կառավարութիւնը Չան-
գեզուր գտնուած միջոցիս, այդ
յայտնի կ'ըլլայ, երբ ըսեմ որ, այդտեղ
գտնուած երեք գաւառներու հարիւր
հազար բնակչութիւնը 50 հազար
բուսլի ծախսելով երեք անգամ
պատգամաւոր զրկած էր Թիֆլիս
Ազգային Խորհուրդէն օգնութիւն
պահանջելու եւ ամէն անգամուն
ալ ձեռնունայն վերադարձած էր:
Նոյնիսկ իմ բանակին պատկանող
գումարը զոր ուղարկած էին ինձ
Վահան Փափազեան եւ Ա. Թէրզի-
պաշեան, երեւանի կառավարութիւ-
նը զբաւեց, որպէսզի քայքայուի զօ-
րախումբս:

(1) Զօրավարը կը լուսանք կը ներէ
մեզ անզազտնապահութիւն մը, եթէ
ըսենք որ այս հալածիչներուն զուտը
կը զօնուէր Գ. Ահարոնեան Մ. Խ.

էրզրումէն վերադարձիս Չ.
Նազարբէկեանի հրամանով գաց-
էի Աղէքսանդրապօլի աշխարհ. ուր
կիւլլի Պուչախ, Օրթաքիլիսէ, Գ.
գանճի: Այդ ժամանակ զրէսթ-
թովսքի դաշնագրով Ախուրե-
(Արփա շալ) էր Հայաստանի սօ-
մանը: Զօրավար Նազարբէկեան հ-
մողուած էր որ թուրքերը Ախու-
եանէ անդին չեն անցնիր. լայց
մը երեք ժամ տեւող կոխէ վե-
հայկանոնաւոր զօրքը Աղէքսանդր-
ապօլը յանձնելով նահանջած էր Գ.
րաքիլիսէ եւ ինձ լուր շէր տրուա-

Իմ վրայ եկող թրքական զօր-
մասի հետ 5 օր կոխ ունեցայ,
ոանց մեր զօրամասերէն ոչ մէկ
հետ կապ ունենալու: Այս տեղէն
գիւղի հայ ժողովուրդը հետս առ-
լով ուղղուեցայ Չալալ օղլու: Թ-
քական զօրամասը կուգար ետե-
ու գեռ Չալալ օղլու չհասած եօթ
թաթար գիւղեր սկսած էին գա-
նել կոնակէս: Չալալ օղլու հասն-

լուս ուղեցի անմիջապէս յարարեր
 թեան մանկ Գարաքիլիսէի հետ
 ուսանողն էր նազարէկեանի օգնակա
 պատերազմական գօմիսէր զաշնա
 ցական վարժապետ Մամասեան.
 կ'իմացնէր ինձ թէ՛ վեց օրէ ի վե
 ց մեզմէ լուր չունին. միեւնոյն ատ
 կ'ըսէր ինձ. «Թրքական ոյժերը չ
 մամուռէն մեր վրայ պիտի յարե
 կին. որով Քարաքիլիսէն թող
 կ'երթաք Տիլիճան. վերջին յարա
 բուժիւննիս է ձեզ հետ» ու հեռաձե
 նը կտրուեցաւ: Յերեկ եւ զիջ
 հեռագրով եւ հեռաձայնով գրազի
 սպայ Շիմշիրեան վեց անգամ
 զած էր յարաբերութեան մտն
 րայց ոչ մէկ պատասխան. որ
 յայտնի կ'ըլլար որ առանց կոյ
 թիւնն էր թողած չե մերկու
 րը:

Ետեւէս եկող թրքական զօրա
 մասը հասաւ Զալալ օղլու Զէի կըր
 նար 20,000 զաղթականութիւնը
 թողով իր բախտին՝ հեռանալ: Աէկ
 ու կէս օր կուռելէ վերջն էս միայն
 որ. զաղթականութիւնը բաւական
 ճամբայ կտրեց դէպի Քալաթերան
 երկաթուղիի կայարանը. որով կըր
 ցայ մեկնիլ Քալաթերան Տսեխդիւղը.
 ուր գտալ բանաստեղծ Յովհաննէս
 Թումանեանը:

Եթէ թուրքերը յանդգնութիւն
 ունենային դատարկ Գարաքիլիսէն
 գալով Լոսիի կիրճը գրաւելու. ես իմ
 զօրամասով ու ամբողջ գաղթական.

ներով պէտք էր գերի մնացած ըլ
 լայի:

Հինգ օր վերջ Քարաքիլիսէէն հե
 ուսանող իմացալ Մամասեանէ թէ
 վերադարձած են Քարաքիլիսէ ու ոչ
 մէկ թուրք չէ մտած քաղաքը: Ե
 րեք ժամ վերջն ալ հրաման ստացայ
 նազարէկեանէ պահել երկաթուղիի
 զիծը: Յետոյ հեռաձայնով կ'իմացնէր
 ինձ Գօմիսէր Մամասեան թէ՛ հայ
 զինուորները ոգևորուած կը հալա
 ծեն թշնամին Քարաքիլիսէի երկա
 թուղիին ուղղութեամբ: Անմիջապէս
 կ'իմացնեմ որ թշնամիի նահանջը
 կեղծիք է. խորհուրդ կուտամ չա
 ուսանալ կեղրոնով. ու երկու թե
 ւերը ամուր պահել միշտ. կեղրոնէն
 չվախնայով բնաւ:

Առաջին օրուան չորս ժամ կոյ
 ւէն վերջ. հետեւեալ առաւօտ կոյւր
 կը վերսկսի եւ 3 ժամ յետոյ կ'իմա
 նամ թէ Գարաքիլիսէն լանձնած են
 արդէն ու նահանջած դէպի Տիլի
 ճան:

Նազարէկեանի զօրամասէն դա
 սալիք եղող 59 սպայ եւ մէկ քանի
 հարիւր զինուոր. որոնք կը փախչէ
 ին դէպի Թիֆլիս. վրաստան. զի
 շերուան ժամը մէկին կը հանդիպին
 պահապաններուս. որոնք փոխադարձ
 համազարկով կը կեցնեն այդ դասա
 լիքները եւ առաւօտուն կը բարձրա
 նան Տսեխ զիւղը իմ մօտս: Այս
 բոլոր անցուղարձերու կենդանի վկան
 են բանաստեղծ Յովհաննէս Թուման
 եան եւ շատ մը Լօսեցիներ:

Յովհ. Թումանեանի աջակցու-
 թեամբ նախ հաց կը տրուի այս
 քանի մը հարիւր հոգիին: Զօրավար
 Կօրկանեանի (Թնդանօթածիզ), ս-
 բուն քով կան չորս ուսու սպաներ,
 կը հարցնեն թէ ո՞ւր գնաց նազար-
 բէկեան.

- Տիլիճան, կը պատասխանէ.
- Դուք ո՞ւր կերթաք.
- Թիֆլիս.
- Պարոններ, կ'ըսեմ, եթէ դուք
 Թիֆլիս երթալ ուզէք Պօրչալուի
 թաթարները բոլորդ ալ կը կոտորեն
 եւ զէնքերնուդ կը տիրանան.
- Ազնիւ խօսք կուտանք, պա-
 տասխանեցին ուսերէն լեզուով, որ
 վաղը կամ միւս օր կը հետեւինք
 քեզ եւ կուգանք:

Նազարբէկեանի եւ Լօռեցի քսան
 հոգիիներկայութեան պատասխանեցի-
 — Դուք չէք հետեւիր ինձ, պի-
 տի երթաք Թիֆլիս եւ կոտորել պի-
 տի տաք այս սպաները եւ քանի մը
 հարիւր զինուորները:

Իսկապէս ալ անոնք գացին եւ
 կոտորուեցան: Ազատեցաւ միայն
 զօրավար Կօրկանեան, չեմ գիտեր
 ինչպէս:

Հետո քսան հազար զաղթական
 ունենալով քալեցի երկու օրուան
 ճանապարհ, սարսափելի անձրեւ եւ

Տիլիճանի տեսալ թէ ոչ ոք չկայ.
 բոլորն ալ փախած են: Գտալ Մես-
 րոպ եպիսկոպոսը. հազարէ աւելի
 որբերով, որոնց մէջ կային մինչեւ
 15 տարու աղջիկներ:

Փախչողները զետր թափած էին
 12 դնդացիր, 2 Թնդանօթ, միլիոննե-
 րով փամբուշտ եւ քանի մը հազար
 Թնդանօթի ուսմբ:

Կապել տալով թէլէֆօնի եւ հե-
 ոագրի թելերը յարարերութեան մը
 տայ էլէնօֆքայի եւ Երեւանի հետ:

Զինուորը դասաւորեցի զէպի
 Գարաքիլիսէ, Տիլիճանէն 15 վերստ
 հեռու: Զօր. նազարբէկեան կը հե-
 ոագրէր ինձ. «Ի սէր Աստուծոյ եւ
 Ազգութեան Տիլիճանը պահէ»: Պա-
 տասխանեցի թէ քանի մէկ հատ
 փամփուշտ ունիմ, Տիլիճանը չեմ
 ձգեր:

Այն ատեն հաց չունէինք: Կե-
 րածնիս ճարտնական քուքուրուզ
 (եզիպտացորեն) եւ զարի էր:

(Շարունակելի) ԱՆԴՐԱՆԻԿ

Le 26.08.2017

WAN

©Western Armenia News